# Արամ Իսաբեկյանը Հալեպի իր ցուցահանդեսի մասին եւ նրա շուրջ

Ինչպես արդեն նշել էինք մեր թերթի մայիսի 29-ի համարում՝ Հալեպում, Համազգայինի ընկերակցության կերպարվեստի հանձնախմբի կազմակերպությամբ՝ բացվել էր գեղանկարիչ Արամ Իսաբեկյանի ստեղծագործությունների ցուցահանդես-վաճառքը:

Հնարավոր է որ, ի տարբերություն Սիրիայի ու նաեւ Հնդկաստանի, Շվեյցարիայի, Գերմանիայի եւ այլ երկրների, որտեղ Արամ Իսաբեկյանը 1982-ից սկսած անհատական ցուցահանդեսներ է ունեցել՝





Հայաստանում նրա անունը հայտնի է միայն արվեստասեր նեղ շրջանակներում: Այդ պատճառով հարկ ենք համարում մի քանի խոսքով ներկայացնել նրան:

Ծնվել է 1952-ին, Երեւանում: 1976-ին ավարտել է գեղարվեստաթատերական ինստիտուտը: Բանակից վերադառնալուց հետո, 1979-ից դասավանդում է նույն ինստիտուտում: 1990-ին ընտրվել է ինստիտուտի պրոռեկտոր:

**- Նույնիսկ Ձեր այս ցուցահանդեսի հրավիրատոմսի մէջ՝ հովանաւոր Բերիո թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Սուրէն արք. Գաթարոյանի խոսքում առաջին հերթին նշվում է. «հայրենի տաղանդավոր գեղանկարիչ Էդուարդ Իսաբէկեանի որդին», ու այսպես միշտ շեշտվում է Ձեր հօր անունը, երբ Ձեզ են ներկայացնում: Դուք չե՞ք վախենում ամբողջ կյանքում Ձեր հօր ուրվականը լինելուց:**

- Չե՛մ վախենում: Հայրս շատ լավ, մե՛ծ նկարիչ է, բայց ոչ մեկը չի կարող ասել, որ իր ազդեցության տակ եմ: Մենք լրիվ տարբեր նկարիչներ ենք ե՛ւ թեմաների, ե՛ւ արտահայտչաձեւերի եւ մնացածի առումով:

**- Ինչու՞ «Համազգայինը» որոշեց կազմակերպել հատկապես Ձեր ցուցահանդեսը:**

- Գիտեին իմ մասին: Այնտեղ, անհատական հավաքորդների մոտ նկարներ ունեմ: Հետաքրքրվել էին, հրավիրեցին, ասացվեց:

Ես երկու օր այնտեղ մնացի: Արաբ նկարիչներն էլ այդ ցուցահանդեսով հետաքրքրվեցին: Նրանք ավելի լավ էին հասկանում իմ գործերը, քան... Արտասահմանի հայերը մեծ մասամբ արվեստից հեռու ժողովուրդ են: Նրանց կոնկրետ՝ իրենց եղած կամ իմացած տեղի պատկերներն են հետաքրքրում:

**- «Զարթոնք» օրաթերթում տպագրված՝ «Նկարիչ մը եւս՝ Արամ որդի Էդուարդի Իսաբէկեան» ակնարկում էլ է հեղինակ Թորանյանը նշում. «Հալեպահայ մեր արուեստասէրները կը նախընտրեն ունենալ «Արարատ», «Սեւան», «Էջմիածին»ի նման գործեր»:**

- Այո՛, զուտ նկարչությունը, որ նկարչական հարցեր է լուծում, իրենց այնքան էլ չի հետաքրքրում:

Շատ են առեւտրով զբաղվել, բայց հիմա նաեւ հոգեւոր կյանքի պետք ունեն: Ու այդ առումով. հենց այնպես չի ասվում, որ հարկավոր են այդպիսի ցուցահանդեսները, թատրոնները, երաժշտախմբերը: Կարոտըն առնելուց, հայ արվեստագետներին տեսնելով հպարտություն զգալուց բացի՝ ընդհանուր զարգացման համար:

Համազգայինն էլ, Բարեգործականն էլ Հալեպում նկարչական դպրոցներ ունեն: Մեկի անունը դրել են «Սարյան ակադեմիա», որտեղ մի քանի ոչ պրոֆեսիոնալ երիտասարդներ են դասավանդում: Մի երկուսը կան, որ Իտալիայում են ուսանել, բայց... մակարդակն այն չէ: Տեսնում ենք պատրաստվածության աստիճանը, երբ ուղարկում են մեր ինստիտուտ սովորելու: Այստեղ զրոյից ենք սկսում... Ես այնտեղ դասախոսություններ կարդացի, առաջարկեցի ու իրենք էլ խնդրեցին, որ կապ ստեղծենք: Ուզում ենք մեր ինստիտուտի բաժանմունք կամ Թերլեմեզյանի անվան ուսումնարանի պես մի բան բացել այնտեղ:

Իհարկե, ոչ միայն հացիվ է Սիրիայի կամ Լիբանանի գաղութների կյանքը. հայերն ամեն տեղ էլ սիրողական թատերախմբեր ունեն, այնպիսի՜ դպրոցներ, որ այստեղ երազել էլ հնարավոր չէ:

**- Վերադառնանք Ձեր ցուցահանդեսին: Ձեր նկարների վաճառքի մէջ հաջողություն ունեցա՞ք: Ու, նյութական օգուտը մի կողմ, Ձեզ չի անհանգստացնո՞ւմ նկարների հետագա ճակատագիրը:**

- Իմ իմացած երկու օրվա ընթացքում՝ կտավներս գնեցին եկեղեցիների ներկայացուցիչները: Ինչ վերաբերում է անհանգստանալուն...

Գառզուն էլ է Հալեպում ծնվել, բայց եթե մնար այնտեղ, մնար Գառնիկ Զուլումյան... Ո՛չ այնտեղ, ո՛չ Երեւանում ճանաչման հասնել հնարավոր չէ: Ա՛յ, մենք հպարտանում ենք Սարյանով, բայց նրան աշխարհը ճանաչու՞մ է...

Եթե, Աստված տա, նկարներս Լուվրում կամ Լոնդոնի թանգարանում հայտնվեն՝ մեզ պատիվ չի՞ բերի: Պիտի ասեն, վա՜յ Հայաստանն այդ նկարը կորցրեց... Դարաշրջան բացած, այսօր միլիոններով վաճառվող նկարները, եթե տեղական շրջանակով ներփակվեին՝ օգու՞տը շատ կլիներ, թե՞ վընասը...

15.06.1991

Հարցազրույցը վարեց ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ